ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)



Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

2. 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 5

2.1. Սովորողների մասնակցությունը պետական ավարտական քննությունների 1-ին և 2-րդ փուլերին 5

2.2. Միավորների բաշխման հիստոգրամներ 6

2.3. Պետական ավարտական քննությունների երկու փուլերի (հունվար, հունիս) արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ 7

2.4. Պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների 8

3. 2013-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ 10

4. 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 11

4.1. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատություն 11

4.2. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների 12

5. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 13

6. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 17

7. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 19

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում 2022 թվականին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննություններն անցկացվել են հունվարի 10-15-ը և/կամ հունիսի 8-22-ը: Սովորողը հունվար ամսին պետական ավարտական քննություն(ներ) է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի ընտրել և չի ուսումնասիրել 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը հունվարին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Միևնույն առարկայից և՛ միասնական, և՛ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը): Սովորողն ինքն է ընտրում, թե որ քննություն(ներ)ը հանձնի հունվարին, որը(որոնք)՝ հունիսին:

12-րդ դասարանի հունվարին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 10-ից մինչև 30-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետև՝ ԳԹԿ): Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների հաստատության տնօրենը նույն ձևով լրացնում և ԳԹԿ է փոխանցում ապրիլի 1-ից մինչև մայիսի 2-ը:

Քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող դասագրքերից և ձեռնարկներից, ինչպես նաև շտեմարաններից:

Քննությունների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև գրավոր աշխատանքների ստուգումն իրականացնում են ուսումնական հաստատությունները:

2021-2022 ուսումնական տարվա պետական ավարտական գրավոր քննություններն անցկացվել են ստորև ներկայացված ժամանակացույցով.

Աղյուսակ 1

Քննական առարկան	Քննության օրը	
	1-ին փուլ	2-րդ փուլ
Հայոց լեզու և հայ գրականություն	11.01.2022 թ.	08.06.2022 թ.
Հայոց պատմություն	12.01.2022 թ.	15.06.2022 թ.
Մաթեմատիկա	14.01.2022 թ.	22.06.2022 թ.

Սանդղակավորումը

Թեստերի առաջադրանքների կատարումը գնահատվել է առավելագույնը 50 միավորով: Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի առաջադրանքների ճիշտ կատարմանը:

Աղյուսակ 2

Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում		Նախնական միավորը (0-50)	Միավորը 20 միավորանոց համակարգում
49-50	20		**19-20-21**	10
46-47-48	19		**16-17-18**	9
43-44-45	18		**14-15**	8
40-41-42	17		**12-13**	7
37-38-39	16		**10-11**	6
34-35-36	15		**8-9**	5
31-32-33	14		**6-7**	4
28-29-30	13		**4-5**	3
25-26-27	12		**2-3**	2
22-23-24	11		**0-1**	1

2. 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2.1. Սովորողների մասնակցությունը պետական ավարտական քննությունների 1-ին և 2-րդ փուլերին

Ստորև ներկայացված է երեք առարկաների քննություններին սովորողների մասնակցության աղյուսակը: Հարկ է նշել, որ 1-ին փուլում հայտագրված, սակայն քննությանը չմասնակցած, ինչպես նաև անբավարար գնահատական ստացած սովորողները մասնակցել են 2-րդ փուլի քննություններին:

Աղյուսակ 3

Քննական առարկան	**1-ին փուլ** (հունվար)		**2-րդ փուլ** (հունիս)	
	Մասնակցած շրջանավարտների			
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու և հայ գրականություն	3844	18,6 %	16818	81,4 %
Հայոց պատմություն	8812	42,6 %	11858	57,4 %
Մաթեմատիկա	6140	29,7 %	14555	70,3 %

2.2. Միավորների բաշխման հիստոգրամներ

Ստորև ներկայացված են սովորողների պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները: Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Հիստոգրամ 1



Հիստոգրամ 2



Հիստոգրամ 3



Միավորների բաշխման հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները, ինչն ավելի մանրամասն ներկայացված է վերլուծության հաջորդ բաժիններում:

2.3. Պետական ավարտական քննությունների երկու փուլերի (հունվար, հունիս) արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից պետական ավարտական քննությունների մասնակիցների թվերը, միջին միավորները, ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները: Աղյուսակ 4-ում ներկայացված են պետական ավարտական քննությունների 1-ին փուլի մասնակիցների արդյունքները, աղյուսակ 5-ում՝ երկու փուլերի մասնակիցների արդյունքները միասին:

Աղյուսակ 4

Առարկան	1-ին փուլ			
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	3844	13,51	0,06	3,7
Հայոց պատմություն	8812	14,07	0,04	3,3
Մաթեմատիկա	6140	13,45	0,05	3,6

Աղյուսակ 5

Առարկան	Երկու փուլերը միասին			
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	20662	13,02	0,025	3,6
Հայոց պատմություն	20670	13,63	0,024	3,4
Մաթեմատիկա	20695	13,53	0,025	3,6

2.4. Պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի, որոնք կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1


Հայոց պատմություն
0,02%
46,8%
37,0%
15,9%
Մաթեմատիկա
0,03%
48,7%
33,5%
17,8%
Հայոց լեզու և հայ գրականություն
0,04%
55,3%
30,3%
14,4%
1-7 միավորներ
8-13 միավորներ
14-17 միավորներ
18-20 միավորներ

3. 2013-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ստորև բերված դիագրամում ներկայացված է 2013-2022 թվականներին պետական ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: 2022 թվականի պետական ավարտական քննությունների արդյունքների վերլուծության մեջ օգտագործվել են նաև տվյալներ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տվյալների բազայից:

Դիագրամ 2



4. 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

4.1. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ 2022 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների վերաբերյալ:

Այս բաժնի մեկնաբանությունը և քննությունների արդյունքների համեմատությունը պահանջում են որոշակի զգուշություն և սահմանափակումներ, քանի որ դրանք տարբեր քննություններից և տարբեր թեստերից են, թեև երկու դեպքում էլ միավորները միջնակարգ կրթության ատեստատում գրանցելու համար համապատասխանեցվել են 20 միավորանոց սանդղակին:

Աղյուսակ 6

Առարկան	Քննությունը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	Պետական ավարտական	20662	13,02	0,03	3,6
	Միասնականի ավարտական մաս	5199	13,36	0,05	3,5
Հայոց պատմություն	Պետական ավարտական	20670	13,63	0,02	3,4
	Միասնականի ավարտական մաս	1455	14,9	0,11	4,1
Մաթեմատիկա	Պետական ավարտական	20695	13,53	0,03	3,6
	Միասնականի ավարտական մաս	5374	15,12	0,05	3,6

Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ միասնական քննություն հանձնող սովորողների ավարտական մասի միջին միավորները բարձր են եղել պետական ավարտական քննություն հանձնող սովորողների միջին միավորներից:

4.2. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Դիագրամ 3-ում ներկայացված են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից 2022 թվականի պետական ավարտական քննություններից և միասնական քննությունների ավարտական մասից մասնակիցների ստացած միավորների տոկոսային թվերն ըստ առաջադիմության չորս խմբերի:

Դիագրամ 3



Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի միավորների ընդհանուր բաշխվածության տարբերությունը զգալի է հատկապես «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

5. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 7-ում ներկայացված են 12-րդ դասարանի պետական ավարտական և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների: Մգացված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի հանրապետության ընդհանուր միջին միավորից բարձր են:

Աղյուսակ 7

Վարչատա-ածքային միավորը	Քննությունը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն (պետական ավարտական քննության միջին միավորը՝ 13,02, միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 13,4)				
Երևան	Պետական ավարտական	6172	**13,13**	3,7
	Միասնականի ավարտ. մաս	1278	13,11	3,7
Շիրակ	Պետական ավարտական	1734	**13,77**	3,6
	Միասնականի ավարտ. մաս	448	**13,79**	3,3
Լոռի	Պետական ավարտական	1601	12,94	3,5
	Միասնականի ավարտ. մաս	442	**13,61**	3,3
Արագածոտն	Պետական ավարտական	1114	12,65	3,3
	Միասնականի ավարտ. մաս	263	12,68	3,2
Սյունիք	Պետական ավարտական	1078	**13,11**	3,5
	Միասնականի ավարտ. մաս	274	**13,48**	3,7
Արարատ	Պետական ավարտական	1883	12,78	3,6
	Միասնականի ավարտ. մաս	419	**13,8**	3,5
Գեղարքունիք	Պետական ավարտական	1632	12,87	3,6
	Միասնականի ավարտ. մաս	409	**13,43**	3,4

Արմավիր	Պետական ավարտական	1941	12,76	3,5
	Միասնականի ավարտ. մաս	367	**13,44**	3,3
Տավուշ	Պետական ավարտական	1137	12,35	3,4
	Միասնականի ավարտ. մաս	345	13,22	3,2
Վայոց ձոր	Պետական ավարտական	436	12,94	3,6
	Միասնականի ավարտ. մաս	90	13,03	3,3
Կոտայք	Պետական ավարտական	1868	**13,28**	3,5
	Միասնականի ավարտ. մաս	478	**14,06**	3,5
Հայոց պատմություն (պետական ավարտական քննության միջին միավորը՝ 13,63, միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 14,9)				
Երևան	Պետական ավարտական	6175	13,6	3,5
	Միասնականի ավարտ. մաս	435	**15,34**	4,4
Շիրակ	Պետական ավարտական	1735	**14,51**	3,4
	Միասնականի ավարտ. մաս	114	**15,63**	3,6
Լոռի	Պետական ավարտական	1601	13,55	3,4
	Միասնականի ավարտ. մաս	116	**15,16**	3,8
Արագածոտն	Պետական ավարտական	1114	13,42	3,3
	Միասնականի ավարտ. մաս	65	13,95	4,1
Սյունիք	Պետական ավարտական	1078	**13,69**	3,1
	Միասնականի ավարտ. մաս	68	**15,49**	3,6
Արարատ	Պետական ավարտական	1887	13,3	3,4
	Միասնականի ավարտ. մաս	99	**16,2**	3,5
Գեղարքունիք	Պետական ավարտական	1633	13,49	3,4
	Միասնականի ավարտ. մաս	120	14,53	4,0
Արմավիր	Պետական ավարտական	1942	13,38	3,3
	Միասնականի ավարտ. մաս	78	14,88	4,0
Տավուշ	Պետական ավարտական	1137	13,28	3,2
	Միասնականի ավարտ. մաս	80	**15,06**	3,5
Վայոց ձոր	Պետական ավարտական	436	**13,9**	3,7
	Միասնականի ավարտ. մաս	24	14,75	4,4

Կոտայք	Պետական ավարտական	1867	**13,97**	3,2
	Միասնականի ավարտ. մաս	130	**16,17**	3,3
Մաթեմատիկա (պետական ավարտական քննության միջին միավորը՝ 13,53, միասնական քննության ավարտական մասի միջին միավորը՝ 15,12)				
Երևան	Պետական ավարտական	6176	**13,98**	3,8
	Միասնականի ավարտ. մաս	1865	15,1	3,7
Շիրակ	Պետական ավարտական	1737	**14,12**	3,5
	Միասնականի ավարտ. մաս	456	**15,57**	3,2
Լոռի	Պետական ավարտական	1601	13,19	3,6
	Միասնականի ավարտ. մաս	393	**15,15**	3,3
Արագածոտն	Պետական ավարտական	1113	12,99	3,4
	Միասնականի ավարտ. մաս	233	14,93	3,5
Սյունիք	Պետական ավարտական	1078	**13,65**	3,5
	Միասնականի ավարտ. մաս	313	**15,33**	3,3
Արարատ	Պետական ավարտական	1886	12,66	3,5
	Միասնականի ավարտ. մաս	391	**15,38**	3,3
Գեղարքունիք	Պետական ավարտական	1632	13,26	3,5
	Միասնականի ավարտ. մաս	308	14,78	3,2
Արմավիր	Պետական ավարտական	1941	13,07	3,5
	Միասնականի ավարտ. մաս	393	14,92	3,5
Տավուշ	Պետական ավարտական	1137	12,89	3,5
	Միասնականի ավարտ. մաս	259	14,48	4,3
Վայոց ձոր	Պետական ավարտական	436	**13,67**	3,7
	Միասնականի ավարտ. մաս	80	15,11	3,6
Կոտայք	**Պետական ավարտական**	1868	**13,91**	3,5
	Միասնականի ավարտ. մաս	468	**15,75**	3,4

Պետական ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորների տարբերություններն ըստ վարչատարածքային միավորների ավելի ակնառու են դիագրամ 4-ում:

Դիագրամ 4



Վարչատարածքային միավորների վերլուծության արդյունքում պարզվել է, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր միջին միավորները գրանցել են Շիրակի և Կոտայքի մարզերի սովորողները, ամենացածր միջին միավորները՝ Տավուշի և Արարատի մարզերի սովորողները:

6. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 9-ում ներկայացված են երեք առարկաներից պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ ըստ ուսումնական հաստատությունների տիպերի:

Աղյուսակ 8

Ուսումնական հաստատության տիպը	Մասնա-կիցների ընդհանուր թիվը	Միջին միա-վորը	Ստան-դարտ շեղումը	Նվազագույն միավոր	Առավելա-գույն միավորը	Անբավարար գնահատա-կան ստացած մասնակից-ների թիվը
Հայոց լեզու և հայ գրականություն (միջին միավորը՝ 13,02)						
Ավագ դպրոց	9716	**13,08**	3,6	6	20	1
Հիմնական	7	9,86	1,2	9	12	-
Միջնակարգ դպրոց	10026	12,85	3,6	8	20	7
Վարժարան	913	**14,38**	3,3	8	20	-
Հայոց պատմություն (միջին միավորը՝ 13,63)						
Ավագ դպրոց	9717	**13,48**	3,5	6	20	1
Հիմնական	7	9	1,4	8	12	-
Միջնակարգ դպրոց	10033	13,61	3,3	5	20	3
Վարժարան	913	**15,6**	2,9	8	20	-
Մաթեմատիկա (միջին միավորը՝ 13.53)						
Ավագ դպրոց	9727	**13,69**	3,7	6	20	1
Հիմնական	7	8	0	8	8	-
Միջնակարգ դպրոց	10049	13,13	3,5	5	20	5
Վարժարան	912	**16,18**	3,0	8	20	-

Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ավելի մանրամասն ներկայացված է դիագրամ 6-ում:

Դիագրամ 5



Վերլուծությունից պարզվել է, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր արդյունքները ցուցաբերել են վարժարանների աշակերտները:

7. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Աղյուսակ 8-ում ներկայացված է ըստ սեռերի նշված առարկաներից մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 9

Առարկան	Տղաներ			Աղջիկներ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	10062	12.1	3.5	10534	13.9	3.4
Հայոց պատմություն	10067	12.8	3.4	10538	14.5	3.2
Մաթեմատիկա	10062	12.8	3.7	10543	14.2	3.4

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են, որ գրեթե բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դա ավելի պարզ է երևում դիագրամ 5-ում, որտեղ ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների տարբերություններն ըստ առարկաների:

Դիագրամ 6



Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկները տղաներից 1.4-1.8 միավորով բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

Ստորև ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

Հիստոգրամ 4



Հիստոգրամ 5



Հիստոգրամ 6



Հիստոգրամներում տեսնում ենք, որ պետական ավարտական քննություններին գերակշռում են տղաների 8-10 միավորները, աղջիկների՝ 14-18 միավորները: